

THE  
DICKRIS PUBLISHING CO.  
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿԱՆԵՐԸ ԲԱՑ  
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 73

ՆՈՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 1 1899

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Այս շաբթուս քաղաքական ա-  
մենէն կարեւոր լուրերը Ձէնընկեցու-  
թեան ընդհանուր ժողովին շուրջը  
կը դառնան: Չարը այս ժողովին ու-  
զեց հրաւիրել նաև Պապը: Իսապա-  
կան կառավարութիւնը Պապին ընդ-  
հանուր ժողովին մասնակցելուն մէջ  
երկու վտանգ տեսաւ. մին այն՝ որ  
ատով Պապին քաղաքական իշխա-  
նութիւնը պետութեանց կողմանէ  
պաշտօնապէս կը ճանչցուի. և միւսը  
աւելի սպառնալից, այն որ 1870ին  
Իտալիոյ թագաւորին կողմէ գրաւ-  
ուած Պապին կարեւորներուն խնդր-  
րը կրնայ առաջ բերուիլ: Բոյսը այն  
խնդիրներն որ դաշնագրութիւննե-  
րով հաստատուած են, որպիսին է  
Աղաւ-Ղորէնի խնդիրը, խաղաղու-  
թեան ժողովին առջև չ'պիտի բեր-  
ուին. բայց որովհետև Պապին կալ-  
ուածներուն գրաւումը դաշնագրով  
կատարուած է, կրնայ ըլլալ որ վե-  
հաժողովը այդ խնդիրն ինկատի առ-  
նէ, այս վտանգը գրգռած՝ Իտա-  
լական կառավարութիւնն Չարի կա-  
ռավարութեան վճռական կերպով ի-  
մացուցեր է թէ՛ եթէ Պապը իտա-  
լացի ժողովին մէջ ներկայաց-  
ցուցիչ զրկելու հրաւիրուի՝ Իտալիա  
այդ ժողովէն բացալից պիտի մնայ:  
Կերևի թէ Անգլիական կառավարու-  
թիւնն ալ նոյնը պիտի ըսէ ի նպաստ  
Իտալիոյ: Արդ՝ Չարին կառավարու-  
թիւնը ինքզինքը երկու ծանր դժ-  
ուարութիւններու մէջ կը գտնէ: Ի-  
տալիա աշխարհի խաղաղութեան  
պահպանումին մէջ մեծ դեր ունե-  
ցած է և ունի. Իտալիոյ սիրտը կու-  
րել և Իտալիան դուրս թողուլ Ձէն-  
ընկեցութեան համար ըլլալիք դաշ-  
նագրութիւնէն՝ մեծ հարուած է հաս-  
տատուելիք խաղաղութեան. միւս  
կողմէն Պապին սիրտը շահել կամ  
կտարելն ալ մեծ կշիռ ունի Ռուսիոյ  
համար: Ռուսիա այս դժուարութե-  
նէն ինքզինքն հանելու համար՝ կու-  
զէ խաղաղութեան ժողովին հրա-  
ւերը զրկելու իրաւասութիւնը Հո-  
լանդացի կառավարութեան վրայ ձը-  
գել: Կը մնայ տեսնել թէ այս տագ-  
նապալից խնդիրն ինչպէ՞ս պիտի լուծ-  
ուի և ի՞նչ հետևանքներ յառաջ  
պիտի գան:

Խաղաղութեան վեհաժողովին  
ներկայացուցիչ զրկելու իրաւունք  
պիտի ունենան այն կառավարութիւն-  
ներն որոնք իրենց արտաքին քաղա-  
քականութիւններն անկախօրէն վա-  
րելու վիճակին մէջ են: Այս հիման  
վրայ՝ Սուլթանը՝ Պապի կողմէ  
ներկայացուցիչ զրկուելու իրաւունք-  
քին դէմ բողոքներ և կերևի թէ յա-  
ջողեր ալ է:

Անգլիա իր բանակին համար  
խիստ մեծ թուով բազմահարուած-  
եան թիւղանոթներ սպառած է և  
անոնցմով իւր բանակը պիտի զինէ՝  
առանց ի նկատի առնելու զէնքնկե-  
ցութեան համար ըլլալիք դաշնագ-  
րութիւնը: Ըսել է մինչև որ դաշ-  
նագիրը ստորագրուի՝ Անգլիա թէ՛

նոր մարտանաւերով և թէ՛ նոր թըն-  
դանոթներով զինուելու վիճակին մէջ  
կըլլայ, պէտք եղածին չափ:

Սուլթանն հրաման մը հաներ է,  
որով Հրէից Պաղեստին գաղթելն իտ-  
պառ կ'արգիլուի: Մեր ընթերցողներ  
թերևս գիտեն Հրէից «Միծնական»  
ձգտումներուն վրայով. Սուլթանն  
վախնալով որ երբ Հրէայք ստուա-  
րանան Պաղեստին մէջ, կարող կըլ-  
լան օր մը քաղաքական տագնապներ  
յարուցանել. ուստի այժմէն կուզէ  
այս վտանգին առջևն առնել:

Լորս Սալըսպրի վերջերս քաղա-  
քական բանաստեղծեան մը մէջ  
յայտարարեր է թէ՛ Սելվաթափուլի  
պատերազմին առնէ «Անգլիոյ թիւր-  
քը պաշտպանելով՝ սխալ ձին էր որ  
պաշտպանեց»:

Ահա այն կարգ մը քաղաքական  
փոփոխութիւններու երկուեքը, որ-  
ուն մէջ կը գտնուի քաղաքական  
աշխարհը: Այս նշանաւոր օրերուն  
մէջ կրնանք Հայերս ըստովին ան-  
սարբեր մնալ: Հարց մը՝ որուն վրայ  
ամեն հայ պարսկական է մտածել:  
Անտարբերներու պատասխանատու-  
թեան ծանրութիւնն ապագան պիտի  
որոշէ, և սակայն ամեն բան անցած  
պիտի ըլլայ:

ՎԵՐՁԻ ԼՈՒՐԵՐ

Ձէնընկեցութեան վեհաժողովին  
ներկայացուցիչներուն հրաւիրագրու-  
ներն զրկուած չեն տակաւին, որով-  
հետև կարելի չէ ելալ որչեզ ցարդ-  
թէ՛ արդեօք Ս. Պապի ներկայացու-  
ցիչը հրաւիրելու է կամ ո՛չ, զի, ինչ-  
պէս որ ըսուեցաւ Իտալիա մերժած  
է պատգամաւոր զրկել իր կողմէ, և  
թէ Ս. Պապի կողմէ պատգամաւոր  
զրկուի Ձէնընկեցութեան վեհաժո-  
ղովին:

Ռուսիոյ կայսրը շատ բարկա-  
ցած է իր նախարարներու և պաշ-  
տօնեաներու ոմանց, վասն զի սոքա՝  
առանց իր գիտութեան՝ այլ և այլ  
օրէնքներ հաստատած ու տնօրինու-  
թիւններ ըրած են ներքին և կրթա-  
կան գործոց վերաբերեալ: Նախա-  
րարական ժողովի մը մէջ Չարն այս  
մասին իր զարմանքն յայտնելէ վերջ՝  
յիշեցուցած է իր պաշտօնեաներուն  
թէ՛ առանց իր գիտութեան՝ ոչինչ  
տեղի ունենալու է Մոսքոյի կայսրու-  
թեան մէջ: Կ'ըսուի թէ այս նախա-  
րարներէ մի քանիներն պաշտօնանկ  
պիտի ըլլան:

Ռուսական կառավարութիւնն  
ոգի ի բռնի կաշխատի նոր զէնքեր ա-  
պրտարել իր զօրաց համար ու պայ-  
մանագրութիւններ կնքել այս մա-  
սին գաղղիական ընկերութիւններու  
հետ: Այս աճապարուժը կըսուի թէ  
մասնաւոր նպատակի համար կըլլայ.  
Ռուսիա կը փափաքի այս պայմանա-  
գրութիւններն խաղաղութեան վե-  
հաժողովէն առաջ կնքել, որպէս զի  
վերջէն դիտողութեանց տեղի չի մը-  
նայ: Փոռուաւոր աչքեկապուրկ:

Կուրը կը շարունակէ Ֆիլիբեան  
կղզիներու մէջ. Միացեալ Նահան-  
գաց բանակը բաւական կորուստ առ-

աւ անցեալ օր 300 հոգի չափ՝ Մա-  
լթոս քաղաքին առջև: Ակո ինայտօ  
ակնկալուած էն աւելի դիմացաւ Ա-  
մերիկացոց առջև. սպանիական զօր-  
քեր միացած են եղեր այս յիշատի-  
տականաց հետ, զի առանց թողուցած  
մեռեալներու մէջ շատ մը սպանիա-  
կան զօրքերու մարմիններ գտնուած  
են: Յեղափոխականաց պարագլուխը  
Ակուինայտօ ըսած է թէ՛ տեղի չի  
պիտի սայ Միացեալ Նահանգներու՝  
մինչև որ իր մայրաքաղաքին առ-  
ջև չի պարտուի չարաշար: Եւ այս  
պիտի ըլլայ անշուշտ քիչ ատենի մէջ:

Ֆիլիպինացիներ 500 հոգար ստո-  
րագրութեամբ աղերսագիր մը կը  
մատուցանեն վերջերս վեհ. Չարին  
500 անձերէ բաղկացեալ պատգամա-  
ւորութեան մը ձեռքով: Աղերսաբ-  
կուք կը խնդրեն եղեր Չարին՝ իրենց  
նախկին տանձնաշնորհու մեծին վա-  
յելի նորէն: Պետական պաշտօնեայք  
այս խնդիր՝ առանց Ռուսիոյ միապե-  
տին իմացելու՝ հրամա՝ կընեն պատ-  
գամաւորաց վերադառնալ անմիջա-  
պէս, հակառակ պարագային մէջ՝  
զանոնք իր յեղափոխական ձերբա-  
կալելու սպառնալիք: Չարը այս խն-  
դիր իմանալէ վերջ սաստիկ բարկա-  
ցած է, զի ոչ ոք իրաւունք ունի ա-  
ռանց իր գիտութեան սյուսկի տնօ-  
րինութիւն մը ընել:

ՍՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Անցեալ երկուշաբթի երկուց Լի-  
րագրոյ իմբազրի կրտսեր կորստն  
Տ. Հայկ Չիթճեան աճուստացաւ իր  
խօսեցելոյն՝ Օր. Հայկանուշ Գոս-  
թիկեանի հետ: Պատիկ տրարողու-  
թիւնը կատարեց Պատուելի Հայկու-  
նի՝ Գոսթիկեանց բնակարանին մէջ՝  
ի ներկայութեան քան ինչպի շափ  
մերձակայ ազգականաց ու բարեկա-  
մաց, որք իրենց սրտագին բարեմաղ-  
թութիւններն ըրին նորագոյն ա-  
մուսնացեալներուն համար:

Չայնակցելով այս բարեմաղթու-  
թեանց՝ կը շնորհակալուիք այս ամուս-  
նութիւնն՝ երկար կեանք ու երջան-  
կութիւն մաղթելով Տիար և Տիկին  
Չիթճեանի:

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Թրէնթընէն տեղական թերթե-  
րուն տրուած հեռագիր մը լուր կու-  
տայ թէ՛ անցեալ երկուշաբթի օր,  
Նիւ Ճըրզիլ օրինաց համաձայն, է-  
ճիրըն թիւպաքօ Գըմբէի ընկերու-  
թիւնն վերակազմուած է 1½ միլիոն  
տոլար զբաժանուած, ու վաւերաց-  
ուած է նոյն նահանգի օրէնքով:  
Այս ընկերութիւնն ընթերցողք կը  
յիշեն անշուշտ թէ Հայկական ըն-  
կերութիւն մ'էր նախ, որոյ մէջ մեծ  
մաս ունէր Տ. Հայկ Չիթճեան, յե-  
տոյ ամերիկացիք ալ միացան այս  
ընկերութեան և ընդարձակեցին գոր-  
ծը: Հիմայ ներկայ կազմակերպու-  
թեամբ ընկերութիւնն աւելի կ'ըն-  
դարձակէ իր գործ և կը յուսանք որ

շատ հայերու ալ օգտակար կը դառ-  
նայ:

Այս ընկերութիւնն կը պատրաս-  
տէ եգիպտական և թրքական սիկա-  
րէթներ:

Ֆիլապրկէն Մարտ 26ին կը գը-  
րեն մեզ:

«Երէկ՝ Կիրակի օր տեղւոյս Աղգ.  
Գրադարանի տարեկան ընդհ. հրա-  
պարակային ժողովը տեղի ունեցաւ,  
և այս առթիւ գրադարանի վարչու-  
թիւնն իր տարեկան համարատու-  
թիւնը ներկայացուց ժողովրդեան՝  
իր գործառնութեանց ու գործունէ-  
ութեանց տեղեկագիրը կարգալով:  
Ներկայք գահուստակութիւն յայտնե-  
ցին վարչութեան ցոյց առած ջան-  
քերուն ու ձեռք բերած արդիւնքնե-  
րուն համար: Գրադարանը մէկ տար-  
ուայ ըրջանին մէջ ունեցած է աւելի  
քան 110 նորընտիր գրքեր՝ բաց ի  
տեղակներէ կամ բրօշուրներէ:  
Ունի 26 անգամ:

Վարչութեան նոր ընտրութիւն  
կատարուելով ընտրուեցան հետեւեալ  
անձինք. Տիարք Կ. Մալեմէմէզեան,  
Մ. Եարմեան, Մ. Ռուբէնեան, Ս.  
Տօբմէճեան և Ն. Մանուչեան:»

ՏԱՐԻՆՈՒՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Այս երկուց տեղի կուրենայ Կրա-  
մբարի Լայսիբլոյ մէջ, 117 Ուէսթ  
Չիթ փողոց, թանգարանի միութեան  
Գրք տարերարձի հանդէսը, Տարա-  
կայս շահինք թէ պատրաստուած ճոխ  
յայտագիրը և հանդիսին նպատակը  
պիտի հրատարակեն իրկեսու ազգայնոց  
հոծ բազմութիւն մը ներկայ գտնուիլ  
այս երկուցին: Ամերիկայ փոխնոց-  
ներու ներկայացումն ու Անկուսի-  
ներու կառակերպութիւնը նորու-  
թիւններ են յայտագրին մէջ, որք  
վստահ ենք թէ լաւ ընդունելութիւն  
պիտի գտնեն հայ հանգիստականներէ:

ԿՈՒՉՈՒԻ

Գերք նորոգող երկաթագործ մը.  
քիչ մը անդրերէն գիտնալն հարկ է:  
Դիմելու է լոկ նամակաւ, շարժա-  
կան ինչ ուզելն յայտնելով:  
Առ՝ Ա. Պ. Տիգրիսի իմբազ-  
րութեան միջոցաւ:

ԱՂԳ

Յառաջիկայ Կիրակէ, Ապրիլ 2,  
առաւօտ ժամը 11ին Հայ - Աւետա-  
րանական Եկեղեցոյ մատուռին մէջ  
պիտի քարոզէ Արժ. Պատ. Յովհան-  
նէս Մ. Հայկունի: Քարոզին նիւթը  
պիտի ըլլայ «Քրիստոսի յարութեան  
անհրաժեշտ սպառնոյնները»:

Այս առթիւ ամեն հայ կը հրաւ-  
րուի ունի կարեւոր նիւթին վրայ  
լսելու: Իր հաւատացեալներ՝ մենք  
զայն կենսական կը գտնենք, որով-  
հետև անկիպ Քրիստոսի եկեղեցիին  
անկիւնաքարն է:

Ն. Ե. Հ. Աւետ. Եկեղեցոյ  
Գործադիր Ժողով



ՃԱՌԱՔԱՐԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,  
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Գ. Պ. ՉԻՔՅԱՆ - - - - Խմբագիր

ՄԻՍՏԵՍԱԿ ԼՍԱՆԳՍՈՒՆՈՒՆՈՒՆՈՒՆ  
ՔԱՆՍԱՍՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան 1 50  
Վեցամսեայ 75  
Տարեկան 10 Ֆրանք  
Բաժանորդագրին կԱՆՆՈՒԿ  
վճարելի է միշտ:

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝  
To the DICKRIS PUBLISHING CO., 301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻՔ, ՇԱՐԱԹ, ԱՊՐԻԼ 1, 1899.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԻՍԻ նախնական թուին մէջ ցուցուցինք թէ՛ Հայերն ընտանեկան շահին ըմբռնումովն ինչպէս կը միտանանք ընտանեկան յարկին տակ, թէ ինչպէս երէց եղբայրը տանը մեծաւորութիւնը կը յանձնէ իրմէ աւելի ընդունակութիւններ ունեցող կրտսեր եղբորը, և ինք սիրով կը կատարէ մշակի և ծառայի գործերը: Եւրոպական և Ամերիկեան ժողովուրդներու մէջ նոյն իսկ հայրը որդւոյն՝ և մայրը դստերն հետ չեն կրնար նոյն յարկին տակ ապրիլ: Ինչպէս Հայերն ասանկաներով միասին կը բնակինք և ամեն անհատ սիրայօժար կը կատարէ այն գործը՝ որուն յարմարութիւն ունի: Եթէ Հայերն նոյն ըմբռնումովը, սգիովը և համակերպութիւնովը վարուինք ընկերական միութիւններու մէջ՝ հոն ալ նոյն սիրայի վիճակն յառաջ պիտի բերենք: Ձանայինք ցուցնել թէ շահին գիտակցութիւնն է որ կատարէ միութիւնը: Շահին իմաստուն ըմբռնումը չեղանցիկը և կը շեղանք:

Հայերն միութեան հիմնալի օրինակ մը սուս անք նաև մեր ցեղային կազմակերպութեան մէջ: Հայրը ցեղային անուճելութիւնը կատարեցուցած է բոլոր Հայաստանի վրայ արշաւող աշխարհակալները, ցասումով կը լեցունէ նուրբ կառավարութիւնը և հիացուցած է աշխարհը: Հայերը դարեւոր բոլոր պատմական աղէտներու և արկածներու հարուածներուն տակ, ամեն աւերիչ ու քանդիչ հեղեղներու առջև միութեան անասան լեռ մը եղեր և կեցեր են: Արքայն սուրբ ու սովը իրենց պատուհասները թափար են Հայերն գլխուն՝ սոյնքան Հայերը իրարու վրայ իր բերեցանք և հայ ցեղին բերեցանք յաւիտեական արձանը կանգնեցնել են աշխարհի պատմութեան մէջ — ցեղային անմահութեան միակ արձանը, որ արհամարհած է մարդկութեան բոլոր հուժիկը աշխարհակալութիւններն՝ անոնց արքայներուն վրայ միշտ սարածելով իր յաւերժական գոյութեան ստուերները: ստուերներ, որոց ետեւը ազգային յոյսի արեւը կը վառի:

Հայերն ընտանեկան յարկին դուրս՝ ցեղային կազմակերպութեան մէջ ալ ցուցեր ենք ռամիկավարական ոգի և արժանիքի գնահատում: Ժողովուրդի ազատ քուէովն ընտրուած են եկեղեցական բոլոր մեծ ու պղտիկ պաշտօնեաները: Երբեմն ամենայն Հայրը կաթողիկոսի գահը բարձրացուցեր ենք աշխարհական անհատ մը: Գիւղացիներն ու գաւառապետներն ընտրուած են շատ անգամ ժողովուրդի ազատ քուէովն ընտրուած են: Կին մը գրեթե որ Մուշի գիւղերէն միայն գիւղացիներն էր, որ «Փիլիսի ապան» (պաշտօնական վերաբերու) ուսերուն վրայ առած և գաւառան մը ձեռքը բռնած՝ քաղաք կերթար, կառավարութեան կը ներկայանար՝ իր գիւղին հաշիւներն ու խնդիրները կարգադրելու: Ցեղին, գաւառին և գիւղին շահերուն ըմբռնումով: ահա, տեղի տուած ենք այնպիսի համակերպութիւններու և զիջումներու, որոց օրինակն հազիւ ուրիշ կը տեսնուի համեմատապէս շատ աւելի քաղաքակրթեալ ազգերու մէջ:

Սակայն ազգային կազմակերպութեան մէջ կրկին երևան կուգայ մեր աւերիչ «ես»ը, մեր նախնանքը, մեր անմիտութեան թիւերը, մեր հակառակող և քանդող ոգին, որով ազգային կազմակերպութեան բոլորովին անընդունակ ժողովուրդ մը կը շահագրգռանք, և ճակատանուս վրայ կը կրենք այն ցաւալի կնիքը: «Հայք ո՛չ միտքանին»: Ասոր ալ պատճառն այն է՝ ինչ որ տեսանք ընկերական անմիտութեան մէջ — ազգային շահերուն, փառքին և ապահովութեան անգիտակցութիւնը — Այն օրէն որ մեր ազգային փառքը մարտեցան, այն օրէն որ ազգին շահերը յաջողութեամբ արուեստան մենք կորուստինք այն գիտակցութիւնը թէ մենք պաշտօնու ճիւղերն ենք, իսկ ազգն է արմատը, բունը, որուն կենսաբան մեր կենսանքն է և մահը մեր մահը:

Մենք՝ որ կրօնական համոզումի հասարակաց շահագրգռութիւնով մը մեր սոցիալային կեանքին շուրջն անմատչելի պարիսպ մ'եղանք, որուն շի կրցին մօտենալ ո՛չ Պապական ու ո՛չ Յունական եկեղեցոյ բոլոր նիւթական, քաղաքական ու զինուորական շահը ուժերն՝ իրենց բոլոր սպառնալիքներովն ու խոստումներովն, այն ալ մեր ամենէն նեղ օրերուն մէջ, երբոր սովն ու սուրը մեր դիակներն արիւնի հեղեղներով կը քշէին կը տանէին: Մենք որ մեր վիրաւորեալ բազուկներն իրարու երկնցունելով՝ այնքան ջերմ սիրով գրկուեցանք ու մեր արիւնքովն ալ կուրծքերուն վրայ «Հայաստանեայց անկախ եկեղեցի» մը գրկեցինք ու պահեցինք, փոյթ չըրինք և փոյթ չենք ըներ մեր ազգային իրաւունքները, ազգային փառքն ու ազգային գոյութիւնը: Մեր ազգային անուններէն Վարդանը միայն պահեցինք՝ ո՛չ որովհետեւ նա ազգային հերոս մի էր, այլ որովհետեւ կրօնքի համար կուրծք նահատակ մ'էր այն: Կարապետ, Յարութիւն, Առաքել, Սաչառուր, Անտոն, Արարհամ, Յակոբ, Պաղտատար եղան մեզ ներշնչողները: ալ Հայկ, Արամ, Արամազդ, Տիգրան, Վահան, Լեւոնը չէին խօսեր մեզի, անոնք ներշնչումներուն առջև քարացրէինք: Սխալ չ'հասկցուի՝ Ընել չեմ ուղեր թէ՛ ինչո՞ւ մեր անկախ կրօնն ու եկեղեցին պահեցինք: Ընդհակառակը ուրախ եմ ասոր համար, մանաւանդ այն անակէտին՝ որ ասով ցուցուցինք սոցիալային այնպիսի աննուստ, աննկուն և հզօր կորով մը, որով տրամադրի ու ընդունակ կըլլանք ընելու ամեն բան ամեն պարագայի տակ՝ երբ շահագրգռութիւն կուենանք: Ուստի միտքս է հեռանումն թէ՛ երբ իմաստուն գիտակցութիւնով մը ըմբռնենք սոցիալարութիւնը թէ՛ մեր անհատական հանգիստը, պահպանութիւնը, փառքն ու շահը գոյութիւնն ունին միայն ու մի միայն ազգին հանգստութեան, ապահովութեան, փառքին ու շահերուն մէջ, այն ամեն պիտի ունենանք ազգային այնպիսի միութիւն մը, այնպիսի ներդաշնակութիւն մը, այնպիսի համարաշխարհութիւն մը և այնպիսի համակերպութիւն մը, ինչ որ գարեհրով ցուցուցեր ենք մեր ընտանեկան յարկերուն տակ և մեր ցեղային կազմակերպութիւններուն մէջ:

Ամեն կազմակերպութեան սիրտը՝ անոր անդամներուն իրենց շահերուն խորիմայ ըմբռնումն է: Գիտակցից ըլլանք մեր ընտանեկան, մեր ընկերական, մեր ցեղային և մեր ազգային կազմակերպութիւններուն մէջ գոյութիւն ունեցող մեր շահերուն: անի է ետք՝ ամեն բան կարելի է:

ՈՍԿԵՂԷՆ ՊԱՏԵՃՈՒԹԻՒՆԸ

Ոսկեղէն պատահութիւն մը կայ Հայերու համար: մանաւանդ գործի ոսկեղէն ժամ մը՝ ազատ երկիրներ գտնուող Հայերուս:

Հայկական խնդիրը խաղաղութեան վեհաժողովին առջև բերելու մասին մեր «Ապագայ» և «Մամուլ» թղթակիցները շատ բանաւոր առաջարկներ և թելադրութիւններ ներկայացուցին: Արաստահմանի հայերս այս ժամանակին մէջ պարտինք բան մը ընել:

Ոսկեղէն պատահութիւն մը Սարաճեան Սրբազանին համար մասնաւորապէս: «Նոր կենսաբ» մէջ մեր Եպիսկոպոսին Պարսկաստանի մէջ ունեցած գործունէութեան վերաբերյալ շատ գովասանք լսեցինք: Կերեի թէ Սարաճեան Եպիսկոպոս գործելու արամադրութիւն և ընդունակութիւններ ունի՝ երբ զօրաւոր պատահութիւններ ներկայանան: Ահա նախի պատահութիւնը ներկայացած է որ մեր հոգեւոր առաջնորդը իր ազգօգուտ գործունէութիւնն հոս մեզի ալ ցուցնէ: Կուզենք որ հոս ալ եկեղեցական պարտականութիւններու սահմանէն անդին՝ ազգային պարտականութիւններու ձեռնամուկ ըլլալը ժողովուրդեան հանգրծեալը մտածէ, սակայն ներկայ կենսաբ — սորինտ կենսաբ — աչքի առջևէ չ'հեռացունէ: Սրբազան, ամեն ձեռնարկ միշտ հարիւրին հարիւր շահ չ'բերեր: շատ անգամ հարիւրին երեք և մէկ է շահը: ալ թող կորուստը ըսել կուզենք թէ՛ որ և է ձեռնարկի յաջողութեան ապահովութիւնը հարիւրին հարիւր ըլլալու չէ անշուշտ որուն ձեռնամուկ ըլլանք: շատ անգամ բիշ հաւանակալութեան նկատմամբ՝ նոյն իսկ զնան աչքի առնելով գործելու է՝ երբ խնդիրը կենսական է: Ահա կենսական խնդիր մը, որուն յաջողութիւնն թէ՛ հարիւրին հարիւր ապահով չէ, զնա երբէք չունի: Ուստի խոնարհաբար կուզանք թելադրել մեր հոգեւոր հորը՝ որ առաջնորդուած ոսկեղէն պատահութիւնէն օգտուի, ջանալով որ Միացեալ Նահանգաց ներկայացուցիչը խաղաղութեան վեհաժողովին մէջ Հայկական խնդիրը յարուցանէ:

Սրբէն եղած թելադրութիւններուն վրայ կուզանք երկու թելադրութիւն աւելցունել: Ա. Սրբազանը նամակներ գրէ Ամերիկայի ազգեցիկ Հայերու, որոնք իրարու քով գան, այս խնդրոյն վրայ խորհրդակցին և տեսնեն թէ ինչ կրնան ընել:

Բ. Ուսթըրի Սինթըրը Հօրը շատ մատչելի է Սրբազանին համար: կրնայ Սրբազանը Ուսթըրին երթալ՝ անդ լիազօտ և կարող հայտնաբեր հետ, և ջանալ Սինթըրը

Հօրի միջոցաւ ընել ինչ որ կարելի է: Եթէ այս խնդիրն անմիջապէս գործադրելի չ'երևնայ, սակաւին, ամեն պարագայի տակ՝ անհրաժեշտ հարկ մի է Սրբազանին համար խորհիլ անոր վրայ և փորձառու հայրենակիցներու հետ խորհրդակցելով՝ տեսնել թէ շատ մը պատարութիւններէ անդին ինչ կարելի է ընել: Պատահութիւնը ոսկեղէն է, որ սակայն երկաթէ կամքով մը կրնայ ձեռք բերուիլ: Պարսկաստանի առաջնորդը հոս ալ կուզենք տեսնել:

ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՆԻ ՄԵՐ ԴԱՏԱՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՆԵՆԸ ԽՍՂԱՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՎԻՆ ԱՌՁԵՒ

Մայիս 18ին կը բացուի խաղաղութեան վեհաժողովը: և Հայերս պարտինք միջոցներ գործածել՝ որպէս գի մեր խնդիրը հոն երեսն բերուի: Ես կը հաւատամ թէ եթէ իրենք օրինաւոր և ազգու կերպով մեր դատը այդ կանանչ սեղանին վրայ դնել, օգտակար արդիւնք մը կրնայ յառաջ գալ: Եթէ մենք ուղեւուն կերպը գիտանանք՝ անոնք ալ թեթեւ բան մը տալու տրամադրի ըլլան: Արդ կուգամ հետեւեալ թելադրութիւններն ընելու:


Նախ՝ Սարաճեան Եպիսկոպոսը շրջաբերական նամակներ զրկէ Ամերիկայի բոլոր եկեղեցականներուն, որ իրենց ժողովուրդներուն մէջ օրոշումներ քուէարկել սան և զրկեն Ուսթըրին կառավարութեան, որ վերջինս իւր վեհաժողովին մէջ ունեցած ներկայացուցիչն հրահանգ տայ որպէս գի Հայկական խնդիրը սեղանի վրայ բերէ:

Երկրորդ: Բոլոր անգլիախոս Հայերն հրատարակ գան և ջանան ամերիկացիներու ընդհանուր ժողովներ գրեմարել, և նոյն իսկ որոշումներ զըրկել սան Միացեալ Նահանգաց կառավարութեան:

Ինչո՞ւ մեր հոգեւոր Առաջնորդը այս կենսական խնդիրը ձեռք չ'առնէ: Ինչո՞ւ մեր անգլիաբաններն՝ որոնք Հայկական ջարդերուն տանը գրամ հանգստակիւր համար այնքան անհոգի հանեցին՝ հիմա ալ այս խիստ կարևոր խնդրին համար ձայն չը բարձրացունեն:

Գործելու սանն է: ուստի ամեն ոք թող ջանայ ընել ինչ որ կրնայ: Նոյն գործունէութիւնը՝ անշուշտ պէտք է սպանել նաև մեր եւրոպայի մէջ գտնուող կարող ազգայիններէն: ՍԱՄՈԹ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ  
Նիւ Եորք, 1899  
Հատար Ա.  
Կը պարունակէ 250 էրեսներ և 15 գեղեցիկ պատկերներ: Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ և փառաւոր կերպիւ կազմուած: Գիններն են.  
Թղթակազմ (ստանց պատկ.) 50 Սէնթ  
Կաթակազմ — — 75 »  
Կաշեկազմ — — 1.00 Տօլար  
Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գեղջ կայ:  
Գրել, գրամ կամ ծրար ղըրկել առ՝  
H. Eguinian,  
145 East 23d St, New York City,

ԱԶՆՏ ԼՍՍՐԱՆ

Անցեալ Կիրակի երեկոյ Ազատ Լաւրանի մէջ խօսեցաւ Տքթ. Ս. Մ. Գարբիէլեան «սեռական տարբերութեան» վրայ: Ատենախօսքը շատ մը օգտակար խրատներ տուաւ՝ մանաւանդ երիտասարդներուն, և՛ իրր բըժիշկ՝ պատուիրեց որ ժուժկալ ըլլան և զգուշանան այնպիսի ճամբաներէ, որք ֆիզիքական և բարոյական կարուստի կը տանին: Ժողովուրդը որ զժողովարար քիչ էր թուով, շատ գոհ կերպիւ մեկնեցաւ:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ի Ե Բ

«Սթանտարտ» Կ. Պօլսոյ թղթակիցը կը հեռագրէ Փետր. 25 թուով: «Վերջերս յիշեցի թէ Գուռը մեծ զայրոյթ ցոյց կուտար Փոքր Ասիոյ եւրոպական միաժողովանքի դէմ: Այժմ կիմանամ թէ շրջաբերական մը շրջառած է խորհրդի և Տիրապէսի կուսակցութեան, բացորոշ հրահանգներ տալով անոնց՝ մեծագոյն խստութեամբ վարուելու: Նոյնպէս իրենց կը հրամայուի առաջին պատեհութեանն օգտուիլ՝ փակելու համար այդ միաժողովանքի ներքեւ գտնուող որրանոցները, և ի հարկին՝ միաժողովանքը նահանգներէն վտարելու համար:

«Գուռը կարծեմ այս շրջաբերականը կը պաշտպանէ՝ պատրուակելով թէ Հայոց Պատրիարքին մէկ խնդրագրին վրայ զրկուած է: Բայց իմ կատարած քննութենէս տեսայ թէ այդպիսի խնդրագիր մը զրկուած չէ Գուռ Գարուի պատրիարքարանէն: Ընդհանրապէս, Լուսաւորչական Հայերը օտար միաժողովանքի ներկայութեանը իրենց զլխաւոր ապահովութիւններէն մին նկատած են միշտ: Միւս կողմէ, կարելի է որ Կաթողիկէ Հայոց պատրիարքը այդպիսի խնդրագր մը ըրած ըլլայ: Երբզհետեւ ասկից առաջ միշտ մեծ նախանձ ցոյց տուած է բողոքական միաժողովանքի դէմ, որոնք նպատակ կը բաշխեն և կրթութիւն կը տարածեն առանց դաւանանքի խորութեան, մինչդեռ կաթողիկէ Հայերուն նպատակը ամբողջովին կրօնափոխական է և ամերիկեան միաժողովանքի իրենց հակառակ և թշնամի կը նկատեն:»

«Թուրքիոյ ամէն կողմը Հայոց դէմ հարձակումը անդադրում կը շարունակէ: Եկած տեղեկութիւնները շատ գէշ են: Հիմա թուրք կառավարութիւնը քաղաքներու մէջ Հայոց տունները, շուկաները այրել կուտայ: Տրապիզոն, Մարտուն, Չմշկածագ զոհերուն մէջ են:»

Փայտի (Կիլիկիա) շրջակաները թուրքերը նոր խլրտում մը կ'ընեն: Մեծ քանակութեամբ ռազմամթերք ամբարած են: Վերջերս կրակի տուին Հայոց սեփականութիւնը եղող ագարակ մը:

«Ֆրէզնոյն կը գրեն մեզ թէ տեղւոյն Հայերը ի նպատակ որբոց նոր հանկանակութիւն մը բացած են վերջերս, որոյ արդիւնքը եղած է 489 տուրք, կամ 163 բաժին՝ իւրաքանչիւր բաժինը 3 տուրքէն: Այս դրամը Պատրիարքարան պիտի զրկուի՝ իր նպատակին գործածուելու համար: Ուրիշ հանգանակութիւն մը ալ եղած է ի նպատակ Չէյթուիկի արտաբերող որոյ արդիւնքը եղած է իրր 150 տուրք: Երրորդ հանգանակութիւն մը ալ եղած է երկու կարօտեալ Հայերու համար: Խաղաղականի փոխան մօտ մեր ապրող Հայերնակիցներ կը թուի թէ խաղաղ կը գործեն ու լաւագոյն պտուղներ կուտան:

— Զարթոյրտէն կը գրեն մեզ. «Զեր Մարտ 4 թիւ թերթի մէջ կար-

դացինք թէ՛ Սեբաստիացի Հայ մը՝ ինչպէս Ս. Յարութիւնեան, իւր ընտանիքը թող տուած՝ տարիէ մը ի վեր կորուած է... Այս՝ ձեզ հաղորդող պարոնը խիստ մեծ սխալմունքը ըրած պէտք է լինի, վասնզի վերոյիշեալ ինչպէս Ս. Յարութիւնեան տեղս հասաւ Յուն. 29ին և կը գործէ Փոփ ընկերութեան քով: Ինչպէս իւր ընտանիքէն բաժնուցեալ և ուղղակի քաղաքըս եկաւ, որ ըսել է միայն մէկ ամիս կընէ բաժնուածը:»

— Լինէն կ'իմացնեն թէ՛ տեղւոյն Որբախնամ ընկերութիւնը 10 անգլիական լիւրայ զրկած է Պատրիարքարան՝ որբերուն ի նպատակ:

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՍԿԱԼԻ ՈՃԻՐԸ

Անցեալ շաբթու՝ վերջի պատերազմի ժամանակ բանակին արուած քնաստիար մի ծանօթ խնդիրը քննելու պաշտօն ունեցող Յանձնախումբը, որ նախագահին կողմէ կարգուած էր ժամանակ առաջ, իր մէկ նիստը ըսաւ քաղաքիս նաւային գործոց յատուկ շէնքին մէջ ի նուայթհօլ փողոց: Ժողովը լսեց ի միջի սյուց՝ նահանգի կառավարիչ Թեոֆոս Ռուզուէթի վիճակութիւնն, որ խիստ ջանջարիչ էր իր տեսակին մէջ: Կառավարիչը, որ կը յիշուի թէ Րեֆ Բայսըրնեբու զլխաւոր մէկ պաշտօնեայն էր, ըսաւ ի միջի սյուց թէ՛ թիթեղեայ տուփերու մէջ պատրաստուած միւսը, որ իր պաշար բանակին կը տրուէր վերջի կուր ժամանակ, ո՛չ միայն անյարմար էր ուտելու, այլ և հիւանդութիւն յառաջ կը բերէր զօրքերուն մէջ: Այս տուփերու բերանն բացուած ժամանակ ճերմակ խաւ մը կերելի եղեր միւսի վրայ, որոց անախորժ հոսն ու չորացած՝ կաշիի պէս կ'ընէր երկու ինքնին ցոյց կուտան եղեր անոր քնաստիար բնութիւնը: Այս դրամուած մտէն կառավարիչը քանիցս կերած ու հիւանդացած է՝ «Երբեմն, սոխով ու այլ ընդեղէններով եփելէ վերջ կուտէի զայն, ըսաւ ի մէջ սյուց, բայց զլխաւոր ալ կրնայի ուտել՝ եթէ միևնոյն կերպով պատրաստուած ըլլար»: Բեֆ Բայսըրնեբու փոխադրող նաւին մէջ այս մտէն մեծ քանակութեամբ մը կայ եղեր: Կառավարիչն ըսած են թէ այդ միւս մասնաւոր դեղերով պատրաստուած է, որպէս զի այրեցեալ գօտիի տակ անգամ կարենայ անփնտ պահուիլ: Ծամբորդութեան միջոցին այդ քիմիապէս պատրաստուած տուփերն այնպէս սոսկալի հոտ մը սկսած են արձակել, որ Ռուզուէթի ստիպումով՝ հրամայեց է բոլորն ալ շուրջ նեւակ:

Այս՝ ինչպէս նաև ուրիշներու նոյնօրինակ վիճակութիւնը ցոյց կուտան բացարձակապէս թէ այս թուանաւոր միւսը բանակին տուող անձինք սոսկալի ոճիր մը գործած են. անոնց յանցանքը մասնիչներէն շատ աւելի ծանր է. զինուորական օրէնքով՝ այդ շտաբագործները հրացանի բռնելն շատ պղտիկ պատիժ մ'է ինքնին. բայց ոչ ոք կը հաստայ թէ Արմըր, Ըսուրիթ և ուրիշներ, որոց գործարաններու մէջ պատրաստուած է այս միւս՝ ո՛ր է պատիժ մը պիտի կրեն, վասնզի, ինչպէս որ կը հաստայ տեղեկան մեմօուրը, խնդրոյն մէջ գլխաւոր մասն ունեցող մարդիկը պատժելու պաշտօն ունեցող բարձրագոյն պաշտօնեաներն են արդէն: Այժմ, Հանա, Մաք Գիւնի և ուրիշ-

ներ մեղաւորից կը կարծուին այս սոսկալի ոճիրին, որու նմանք թերեւս տեսնուած չէ պատմութեան մէջ:

Բայց թէ ինչպէս պիտի վերջանայ այս խնդիրն, կ'սպասենք անեղև. քանի մը հաստփոր միլիօնատէրներ այս խնդրի մէջ ալ 70 միլիօն ժողովրդի արդար բողոքին ու ցասման պիտի կրնա՞ն յաղթել...:

— Շատ հուանական է. զի այսպէս եղած է շատ անգամ:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Մինչև վերջերս գլխութեան ձեռք բերած մեքենական ուժերը ելքարական հոսանքի և կրակի միջոցով կը լայնին, հիմա ցուրտը սկսած են գործածել ահաբեկիչ ոյժ արտադրելու համար, և որ շատ քիչ ծախքով կը ստացուի:

Օղբ գէրոյէն 320 աստիճան վար ցրտութեան մէջ հեղուկ կը դառնայ, ջուրի նման բան մը կը լայն. ըսել է այդ աստիճան կը խտանայ կը կծկուի: Հեղուկի վերածուած օղբ երբ մեքենային մէջ կը դնեն, որովհետև սովորական բարխտանութիւնը օդին ստուգման կէտէն հարկաւոր աստիճան վեր է, այդ համեմատական տաքութեան ազդեցութիւնով կակի սնտորանալ, պարզուիլ, իր առջի կազային վիճակին ձգտիլ. և ահա այս գործողութիւնը ոյժ կը լայն և կը շարժէ մեքենան:

Հիմա սկսուած է ճնշուած օդն ալ գործածուիլ մեքենական ուժի համար: Ահաբեկ քանակութեամբ օդ կը ճնշեն խիստ փոքրիկ շափի մը մէջ. որովհետև օղբ առաձգական է՝ իր ստացած այն ստատիկ ճնշումին մէջ դադար չի կրնար կենալ. տարածուելու, պարզուելու ձգտումն ունի. ուստի մեքենային մէջ այն դերը կը կատարէ, ինչ գեր որ զսպանակը կը կատարէ ժամացոյցին մէջ՝ և մեքենան կը շարժի:

— Տքթ. Գոյի՝ որ մանրորդներու վրայ ամենէն մեծ հեղինակութիւնն է, կըսէ թէ՛ տնտէրի, ջերմի և դողի հիւանդութիւններն յառաջ կուգան մօտեցնելու արտադրած մանրորդներէն, թէ այս հիւանդութիւններն այնպիսի տեղեր կը պատահին, ուր մօտեցնելու անհոջ նուազախումբերը իրենց ճգնաճեղքով մեր շուրջը կը պարեն, մեզի հիւանդութիւն և մահ պատճառող մանրորդներու բանակներ կը թափեն մեր գլխուն:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Բ

Նիւ Եորքէն ուղղակի Պօլիս նաւային դիմ մը հաստատուած է: Այս նաւային դիմն առաջին անգամ 15000 տոպրակ ալիւր տարաւ Պօլիս, որը Պօլսոյ ալիւրի շուկային մէջ գնորտ մեծ յեղաշրջում յառաջ բերաւ: Պօլսոյ ալիւրի աղացքները սովորական վարձքէն հարիւրին 50 դեղ մը ընել պարտաւորուած են, բայց սովորական շի պիտի կարենան Միացեալ Նահանգացի հետ մրցիլ, որովհետև կարող չեն վերջնոյն ալիւրին շափալ ալիւր հանել: Հացագործներու հրապարակին վրայ մեծ պահանջ մը կայ ամերիկեան ալիւրի, և կ'երեւի թէ այս նոր նաւային դիմը Միացեալ Նահանգացի վաճառականութեան մեծ հրապարակ մը պիտի բանայ թիւրքի մէջ: Պօլսոյ ալիւրի վաճառականները տեսնելով ամերիկեան ալիւրի ներմուծումէն իրենց պատճառուելը քննարկ կառավարութեան հետ զրկուածութեան պաշտօնեայն պաշտօնեաներն են արդէն: Այժմ, Հանա, Մաք Գիւնի և ուրիշ-

որ իր մէջ առողջապահութեան հակառակ բաներ կը պարունակէ(?)...: Մ. Նահանգացի Կ. Պօլսոյ դեսպանը բողոքեց է այս բանին դէմ, և նախարարութիւնն ևս առերէ այդ տրբուած ապուշ և խարդախ որոշումը: — Հունկարացի նշանաւոր դերասանուհի մը թատերաբեմին վրայ սիրային մենախօսութիւն մ'ըրած պահուն՝ կը արատաներ է «Ա՛խ, այդ քու սէրդ զիս մեռցուց...» անմիջապէս գրպանէ բազմաբարձուած ան մը իր սրտին կրակեր՝ ու մեռեալ փոուեր է տախտակաման վրայ:

ՏԵՂԱՓՈՒՍԻՅԻՆ

ՏԻԳՐԻՍԻ Տպարանը փոխադրուեցաւ: — Նամակ կամ ծրար զրկել հետեւեալ հասցէին:

Q. B. CHUTJIAN

301 E. 34th St. N. Y. City

Վաղը Ազատ Լաւրանը գոց պիտի մնայ՝ Թանգարանի Միութեան տուած տարեդարձի հանդէսին առթիւ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ


Վաղը Մեծի Պահոց «Տեստեսի» կիրակի լինելով՝ Ս. Ոսկերեան եկեղեցոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի և Արժ. Խաղ Վարդապետ պիտի քարոզէ, նիւթ ունենալով՝ «Տա՛ւր զհաշիւ տնտեսութեանդ, զի ոչ ևս կարեն լինել տնտես»:

Ա. Ձ Դ

Նիւ Եորքի Հայկազեան Կաճառը հաստատուած է ի թիւ 498 Երրորդ Ալիւր: Կը հրաւիրուի ամեն Հայ երիտասարդ անդամակցելու սոյն ամենակարեւոր կազմակերպութեան: Մարմնամարզութիւնն ու զինավարժութիւնը կ'սկսին ժամը ութին ամեն Ուրբաթ: Այս Ուրբաթ վարժութեանէ զատ ընդհանուր անդամաց մասնաւոր ժողով կայ:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

281 Իսթ 28րդ փողոցի նպարավաճառի խանութիւն մէջ ի միջի այլոց՝ կը վաճառուի պուշուր փափաղ 4 սէնթի, ծեծած՝ 5 սէնթի և գառան միս՝ 6 սէնթի փափաղը: Մեմօր Պ Գ Ա ՉԱՆՃԵԱՆ (Բալուցի)



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿՍՐ.

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք:

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսարուած կոշիկներ կը կարենք ձեւաւորել վայելելի կերպով: Կը նորոգենք հին կոշիկներ շափալու գներով: Ուրիշի մը երթալէ յառաջ յառաջ կ'եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կոշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց « \$1.25 » « \$2.50 Տղայոց և աղջկանց կոշիկներ \$0.50 » « \$1.50

